ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5

NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

HAIA-5

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ХАИА-5

YEREVAN
IAE PUBLICATION 2023

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ 2023

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԻԱ – 5

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5

ԵՐԵՒԱՆ
ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2023

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Published by decision of the Scientific Council of the Institute of Archaeology and Ethnography, NAS RA

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ *Արսեն Բոբոխյան*

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ *Տորք Դալալյան*

Խմբագրակազմ՝ *Լևոն Աբրահամյան, Պավել Ավետիսյան, Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան, Ջուստո Թրաինա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատուրեան, Ռուբեն Կարապետյան, Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան, Հարություն Մարության, Համլետ Պետրոսյան, Գագիկ Սարգսյան, Ադամ Սմիթ, Նվարդ Վարդանյան* (պատասխանատու խմբագիր), *Պատրիկ Տօնապետեան, Պիտեր Քաուի*

Editorial Board

Editor-in-Cief: *Arsen Bobokhyan*

Vice-Editor-in-Chief: *Tork Dalalyan*

Editorial Stuff: *Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Harutyun Marutyan, Hamlet Petrosyan, Gagik Sargsyan, Adam Smith, Giusto Traina, Nvard Vardanyan* (Managing editor)

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 5-րդ հատորն ընդգրկում է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի, Հայաստանի պատմության թանգարանի, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի և այլ հիմնարկների հետազոտողների գիտական հոդվածներ, որոնք վերաբերում են հնագիտության, ազգագրության, մշակութային մարդաբանության և բանագիտության՝ մինչ օրս չլուսաբանված զանազան հիմնախնդիրների քննությանը: Որոշ հոդվածներ ունեն միջգիտակարգային բնույթ և շոշափում են նաև լեզվաբանական, արվեստաբանական հարցադրումներ: Համարն ընդգրկում է նաև գիտական հաղորդումներ և հոբելյանական հոդված:

ISSN 2953-805X

DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ ԵՒ ԳՏԱԾՈՆԵՐ 7

Բենիկ Վարդանյան
Կուր-արաքսյան միջագետքի բրոնզ-երկաթեդարյան կեռերը 8

Հենրիկ Դանիելյան
«Կիկլոպյան» ամրոցների ֆենոմենը՝
Արագածի հարավային լանջերի ամրոցների օրինակով 26

Լևոն Մկրտչյան
Արարատյան դաշտի հյուսիսում գտնվող աշտարակատիպ կառույցները 37

Արմինե Գաբրիելյան
Արցախի Տիգրանակերտի անտիկ դրոշմազարդ խեցեղենը 45

Ռուզան Փալանջյան
Անտիկ ժամանակաշրջանի գինեգործությանն առնչվող
հնագիտական գտածոներ Վայոց ձորից 57

Դիանա Միրիջանյան
Հայաստանի միջնադարյան քարե տապանները 66

Արսեն Հարությունյան
Տաթևի մեծ անապատի վիմագրական ժառանգությունը 76

II. ԱՎԱՆԴՈՒՅԹ ԵՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 95

Նվարդ Վարդանյան
Ավելը (ցախավելը) ծիսահավատալիքային համատեքստում.
ավանդույթի հարատևումը մեր օրերում 96

Սմբատ Հակոբյան
Մահը հայկական ֆեյսբուքում.
ավանդական, մոդեռն, թե պոստմոդեռն սուգ 109

III. ՊԱՐ ԵՒ ԾԵՍ 123

Նարինե Շամամյան
Պարերը Վայոց ձորի հարսանեկան արարողություններում
(ավանդույթ և արդիականություն) 124

Հայարփի Մնանյան
Իրանահայերի չուբբազի (փայտախաղ) և դաստմալբազի
(թաշկինակներով պար) պարերը ծիսական և կենցաղային միջավայրում 137

IV. ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒՅԹ 149

Սամվել Ռամազյան
Քաչալ Համզա. ընդհանուր կերպար հայկական և թյուրքական էպոսներում 150

Հասմիկ Մարիկյան
Օրորոցի լեզվամշակութային դրսևորումները հայ իրականության մեջ (անգլալեզու նյութի համադրմամբ) 172

Լուսինե Անգելուշ
Երևան քաղաքի ուսանողության լեզվական վարքագիծը և միջմշակութային հաղորդակցումը 182

V. ՊՈԼՍԱՀԱՅՈՑ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ 195

Սալվինե Մարկոսյան
Ներհակությունները պոլսահայ համայնքում. արևմտահայերի ազգային սահմանադրության հաստատման շուրջ (1856–1863 թթ.) 196

VI. ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ 207

Մարիամ Մարիբեկյան
Հառիճի հնագիտական հուշարձանի ուսումնասիրության պատմությունից 208

Յարութիւն Խաչատուրեան
Խաչքարերի ուսումնասիրության մեթոդաբանական ակնարկ 214

VII. ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ 225

Արման Մալոյան
Հակոբ Չոլաքյան - 75 226

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ ԵՒ ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ 233

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 276

I

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ ԵՎ ԳՏԱԾՈՆԵՐ

DOI:10.54503/2953-805X-2023.5-26

Հենրիկ Դանիելյան
ԷՊԱԹ

«ԿԻԿԼՈՊՅԱՆ» ԱՄՐՈՑՆԵՐԻ ՖԵՆՈՄԵՆԸ՝ ԱՐԱԳԱԾ ԼԵՌԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԼԱՆՋԻ ԱՄՐՈՑՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ*

Արագած լեռան հարավային լանջի պաշտպանական համակարգերի տարածման օրինաչափությունները և գործառույթը հասկանալու համար՝ ներկայացվող հոդվածում օգտագործվում են նորագույն մեթոդներ՝ մասնավորապես GIS համակարգ: Ներկայացվող տարածքը հարուստ է «կիկլոպյան» ամրոցներով (ամրացված բնակավայր, ամրոց, ամրացված սրբատեղի, դղյակ) և հսկայական հեկտարներ գրավող դամբարաններով (կրոմլեխ, դամբանաթումբ, դոլմեն): Տարածաշրջանը հարուստ է ջրային ռեսուրսներով, մասնավորապես Ամբերդ, Քասախ, Շահվերդ լեռնային կիրճերով հոսող մանր և միջին գետակները, ինչպես նաև բազմաթիվ բնական և արհեստական ջրավազանները կենսական նշանակություն են ունեցել տարածքում վաղնջական շրջանում բնակավայրային համակարգերի ձևավորման համար[1]:

Արագած լեռան հարավային լանջը ինտենսիվորեն բնակեցվել է բրոնզ-երկաթեդարյան մշակույթների զարգացման վաղագույն փուլերից: Ինչ վերաբերում է «կիկլոպյան» ամրոցներին, ապա այստեղ, ինչպես ողջ Հայկական լեռնաշխարհի սահմաններում, դրանք գոյություն ունեին առնվազն ուշ բրոնզի դարից: Այստեղով էին անցնում Արարատյան դաշտը Շիրակին, Ձավախքին և Թոռեղքին կապող ճանապարհները, որոնք և վերահսկվում էին ուսումնասիրության առարկա դարձած ամրոցների կողմից մ.թ.ա. 14–9-րդ դարերում [հմմտ. նկ. 1]:

Ներկայացվող տարածքն, ըստ էության, բրոնզ-երկաթեդարից մինչև զարգացած միջնադար ընդգրկող ժամանակահատվածում կարևոր դեր է խաղացել Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան շրջանների պատմական զարգացումներում: Տարածքի նախապատմական շրջանից մինչև ուշ միջնադարն ընդգրկող ժամանակաշրջանը խիտ բնակեցման մասին են վկայում հարուստ բնակավայրային համակարգերը, հսկայական հեկտարներ գրավող դամբարանները, միջնադարյան հարուստ վիմագրական կոթողները և մոնումենտալ կառույցները:

Հիմնաբառեր՝ Արագած լեռ, «կիկլոպյան» ամրոց, ուշ բրոնզի դարաշրջան, վաղ երկաթի դարաշրջան:

Դիրքը և ուսումնասիրության պատմությունը

Հետազոտված տարածքի «կիկլոպյան» ամրոցներին առաջին անգամ անդրադարձել են դեռևս 19-րդ դ. վերջերին և 20-րդ դ. սկզբներին: 1920-ական թվականների սկզբներին Հնությունների պահպանության կոմիտեն հետախու-

* Հոդվածը հրատարակվում է ՀՀ ԿԳՄՄՆ Գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 3–6/I «Ուրարտագիտական հետազոտությունների սեկտորի ստեղծում» գիտական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի շրջանակում:

[1] Դանիելյան 2019, 625–637:

զական աշխատանքներ է իրականացրել Արագած լեռան հարավային լանջերին՝ դեպի Արարատյան դաշտ ձգվող հատվածներում: Ուսումնասիրվող գոտու «կիկլոպյան» ամրոցներին անդրադարձել են Ս. Տեր-Հակոբյանը, Թ. Թորամանյանը, Ա. Քալանթարը, Ե. Տեր-Մինասյանը, Ե. Բայբուրթյանը, Վ. Աբրահամյանը, Գ. Արեշյանը, Կ. Ղաֆադարյանը, Գ. Սարգսյանը, Հ. Օհանյանը, Հ. Սիմոնյանը, Պ. Ավետիսյանը, Գ. Թումանյանը, Ռ. Բադալյանը, Լ. Կիրակոսյանը, Ա. Աղաջանյանը[2]: 2016–2017 թթ. ՀՀ. ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի՝ վիշապաքարեր հետազոտող արշավախմբի կազմում (ղեկ. Ա. Բոբոխյան) հետախուզական աշխատանքներ ենք իրականացրել Արագած լեռան հարավային փեշերին: Մասնավորապես խնդիր էինք դրել քարտեզագրել Հուշարձանների պահպանության պետական ցուցակում հաշվառված՝ նախկինում մասնակի ուսումնասիրված հուշարձանները: Հետազոտվող տարածքը գտնվում է ծովի մակերևույթից մինչև 1000–2000 մ բարձրության վրա:

Արագած լեռան հարավային լանջի բրոնզ-երկաթեդարյան «կիկլոպյան» ամրոցները

Պաշտպանական համակարգերը, որպես կանոն, կառուցվում էին ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող հանգուցային հատվածներում, շրջակայքի նկատմամբ համեմատաբար բարձր դիրք գրավող ալպիական մարգագետիններով հարուստ գոտիներում[3], կտրուկ և դժվար հասանելի լանջերով[4], հարթ վերնամասով[5] բլուրներին, սարահարթերին, լեռնային հրվանդաններին[6] և դարավանդներին[7], լեռնային գետերի և ջրերի աղբյուրներին մոտ[8], շրջակայքում բարձր լեռներ և խիտ բլուրներ ունեցող[9] գետերի կիրճերին[10]՝ ինտենսիվ օգտագործելով տեղանքի բնական պաշտպանվածությունը[11], հատակագծում շատ հաճախ կրկնօրինակելով տեղանքի հարթ վերնամասի տեղագրական յուրահատկությունները:

---

2 Տեր-Հակոբյան 1935, 145–148; Թորամանյան 1942, 11–40; Քալանթար 1925, 207–232; Քալանթար 1937 171–187; Տեր-Մինասյան 1961, 45–56; Байбуртян 2011, 13, 21, 22, 38, 56; Աբրահամյան 1940; Արեշյան, Ղաֆադարյան 1996; Արեշյան և այլք 1977; Արեշյան 1985; Smith, Kafadarian 1996, 27–29; Саркисян 1988; Օհանյան 1990: Սիմոնյան, Երանոսյան 1977ա; Սիմոնյան, Երանոսյան 1977բ; Սիմոնյան, Երանոսյան 1978ա; Սիմոնյան, Երանոսյան 1978բ; Սիմոնյան 1991; Աւետիսեան և այլք 1998; Ավետիսյան 2003, 53–55; Թումանյան 2012; Badalyan, Avetsyan 2007, 24–33; Կիրակոսյան, Աղաջանյան 2013, 71–80:

3 Расулоглы 1993, 19.

4 Аджян и др. 1932, 62; Пиотровский 1949, 57; Есаян 1976, 16.

5 Թորամանեան 1921–1922, 212:

6 Արեշյան, Ղաֆադարյան 1996, 80–86:

7 Sanamyan 2002, 325–327.

8 Пиотровский 1949, 45; Բարխուդարյան 1935, 20; Սարգսյան 1979, 72; Расулоглы 1993, 19.

9 Թորամանեան 1921–1922, 21:

10 Есаян 1976, 16.

11 Расулоглы 1993, 19.

Արագած լեռան հարավային լանջի բրոնզ-երկաթեդարյան ամրոցաշինության առանձնահատկությունը դրանց 1–2 կմ հեռավորության վրա խմբերով/կլաստերներով հանդես գալն է [նկ. 1]:

Պարիսպները կառուցելու համար եղել են մի քանի սկզբունքներ[12]: Դրանք կառուցված էին 3–5 մ հաստության որձաքարի մեծածավալ քարերով, չոր շարվածքով: Համեմատության համար նշենք, որ «կիկլոպյան» ամրոցների պարսպաքարերը Սևանա լճի ավազանում շարվում էին մինչև 2,5–3 մ ծավալով և ունեին 6–8 տոննա զանգված[13], իսկ Արագած լեռան հարավային լանջին՝ մինչև 1,5–2,2 մ ծավալով և ունեին 2,5–3 տոննա:

Ամրոցներ

Ամրոցները համեմատաբար փոքր տարածք ընդգրկող կառույցներ էին, հիմնականում ընդգրկում էին մինչև 1 հա տարածք, որտեղ կարող էին տեղավորվել մինչև երեք հարյուր սպառազինված ռազմիկներ: Ամրոցներին կից տարածվում էին փոքր տարածք ընդգրկող կացարանները, որոնց շուրջը փռված էր լինում դամբարանադաշտը: Պաշտպանական համակարգերի այս խումբը լիովին համապատասխանում է ուրարտական սեպագրում հիշատակվող É.GAL(MEŠ) - «ամրոց»-ների տիպին[14]: Ամրոցների այս տիպին է պատկանում Բյուրական 1-ը (նախկին անվանումը՝ Շիշկոնդ ամրոց): Այն գտնվում է Անտառուտ գյուղից մոտ 2 կմ հյուսիս՝ Ամբերդ գետի կիրճի ձախ ափին, Շիշկոնդ կոչվող բլրի գագաթին: Ամրոցը, գտնվելով ծ.մ. 2000 մ բարձրության վրա, կարևոր ռազմավարական դիրք է գրավում դեպի Արագած լեռան բարձր լեռնային գոտիներ ընթացող ճանապարհին: Ամրոցը հատակագծում կրկնօրինակում է բլրի կլորավուն ռելիեֆը (մոտ 0.2 հա): Դեպի ամրոց ընթացող համեմատաբար հեշտ հասանելի հատվածը գտնվում է բլրի արևմտյան կողմում, ուր եղել է մուտքը, որը 1.80 մ լայնության բացվածք է: Ուղղանկյուն հատակագծով կացարանները գտնվում են բլրի լանջերին և ստորոտներին [նկ. 2]:

Նույն հանգուցային հատվածում է գտնվում Բյուրական 3 (նախկին անվանումը՝ Ինաքլու դար) ամրոցը: Այն գտնվում է Անտառուտ գյուղից մոտ 0.5 կմ հարավ-արևելք, Բյուրական-Ամբերդ ճանապարհից մոտ 200 մ արևելք՝ անդեզիտո-որձաքարային լավային ծագման ձվածիր բլրի գագաթին: Ամրոցը, գտնվելով ծ.մ. 1615 մ բարձրության վրա, կարևոր պահակակետ է Ամբերդի ավազանում: Իշխող դիրքում գտնվող բլրի հարթ վերնամասը օղակված է բլրի ռելիեֆը կրկնօրինակող ձվածիր (մոտ 0.1 հա) հատակագծով ամրոցով: Շրջապարիսպը կառուցված է մեկ երես պարսպաքարերով: Ամրոցի պաշտպանությունը հարավային, արևելյան և արևմտյան կողմերում իրենց վրա են վերցնում դարավանդաձև կառույց-հենապատերը: Մուտքը գտնվում է հյուսիսային կողմում, ունի մոտ 5 մ բացվածք:

---

12 Даниелян, Васильева 2018, 143–144.

13 Սարգսյան 1979, 72:

14 Հմմտ. Арешян 1978, 93–94; Գրեկյան 2018, 225:

Ամբերդի ավազանի հանգույցը, բացի ռազմական նշանակությունից, ունի նաև չափազանց նպաստավոր բնական պայմաններ: Հարուստ ջրագրությամբ, լեռներով ու ձորերով շրջապատված բարձրավանդակը հիանալի պայմաններ է ստեղծում երկրագործության և անասնապահության զարգացման համար:

Վերը նշված ամրոցները կարևոր ռազմավարական դիրք են գրավում դեպի Արագած լեռան բարձր լեռնային գոտիներ ընթացող ճանապարհի հարավային հատվածներում և տեսանելի կապի մեջ են գտնվել Օրգով 1 (նախկին անվանումը՝ ամրոց Օրգով) ամրացված բնակատեղիի հետ[15], որի համար հավանաբար դիտակետ են եղել: Ռազմական վտանգի դեպքում այդ ամրոցները խարույկների միջոցով ազդանշաններ էին հաղորդում ամրացված բնակավայրերին:

Ամրացված բնակատեղիներ

Ամրացված բնակատեղիները կազմված էին ամրոցից, միջնաբերդից, աշտարակատիպ կառույցներից, բնակատեղիից և դամբանադաշտից: Միջնաբերդը ամրացված բնակավայրի լավ պաշտպանված հատվածն էր, որը գտնվում էր տեղանքում համեմատաբար բարձր դիրք գրավող բլրին, սարահարթին կամ հրվանդանին, իսկ բնակելի համալիրները կառուցվում էին ինչպես ամրոցից ներս, այնպես էլ ամրոցից դուրս՝ բլրի լանջին և ստորոտին՝ տարածվելով դեպի մոտակա հարթավայրերը: Բնակավայրերի այս տիպը ուրարտական սեպագիր արձանագրություններում հիշատակվում է URU գաղափարագրով, որտեղ կար մշտական բնակչություն: Գոյություն ունեին նաև URU LUGAL-nu-si– «արքայական քաղաք» տիպի բնակավայրեր[16], որոնք ըստ երևույթին հանդիսացել են «արքայական քաղաքներ» և երկրների կենտրոններ: Նմանատիպ բնակավայրերի տիպին է պատկանում Ամբերդի ավազանում գտնվող Ուշան 1-ը (նախկին անվանումը՝ ամրոց Մոտկան): Հուշարձանախումբը գրավում է մոտ 100 հա տարածք[17]: Ծ. մ. 1357 մ բարձրության վրա գտնվող Կենտրոնական հրվանդանը կազմված է հարթ կամ հարթեցված -130 դեպի հարավ թեքության լանջաձև վերնամասից՝ օղակված դարավանդներով և թեք ստորոտներով: Գագաթի հարթ վերնամասը օղակված է հրվանդանի ռելիեֆը կրկնօրինակող սեպաձև (մոտ 9 հա) հատակագծով ամրոցով: Ամրոցից ներս, հրվանդանի գագաթի ամենաբարձր կետում՝ արևելյան հատվածում, պահպանվել է մոտ 950 մ^2 տարածք գրավող միջնաբերդը: Վերջինիս շրջապարիսպն ունի երկու երես, կառուցված է մեծածավալ որձաքարերով չոր շարվածքով: Դեպի միջնաբերդ ընթացող միակ և գլխավոր մուտքը գտնվում է ամրոցից ներս՝ միջնաբերդի հարավարևելյան կողմում և ունի 4 մ բացվածք: Միջնաբերդից դուրս՝ մուտքի արևմտյան կողմում, պարսպապատից ոչ հեռու գտնվում է ձվածիրին մոտ հա-

[15] Արեշյան և այլք 1977, 91; Սիմոնյան, Երանոսյան 1977բ, 52–54; Арешян 1978, 99–100; Կիրակոսյան, Աղաջանյան 2013, 77–80:

[16] Арешян 1978, 92:

[17] Արեշյան և այլք 1977, 81; Արեշյան, Սիմոնյան 1976, 285:

տակագծով՝ հավանաբար տաճարական համալիր հանդիսացող երկսենյակ աշտարակատիպ կառույց: Բնակատեղին կազմված է ներքին և արտաքին բնակարաններից, որոնք հիմնականում ուղղանկյուն հատակագծով կացարաններ են [նկ. 3]:

Նմանատիպ բնակավայրային համակարգ ուսումնասիրվել է նաև Շահվերդի ավազանում՝ Ղազարավան գյուղից մոտ 1,5 կմ հյուսիս՝ Շահվերդ գետի կիրճի ձախ ափին: Ծ. մ. 1440 մ բարձրության վրա գտնվող Ղազարավան 1-ը (նախկին անվանումը՝ ամրոց Նազրվան, Ղազարավան, Լազարավան) ունի ավելի քան 40 հա մակերես[18]: Սարահարթը կազմված է աստիճանաձև՝ դեպի Արարատյան դաշտ իջնող՝ հեշտ հասանելի տեղանքում, որը գտնվում է հարթ տարածության վրա, երեք կողմից շրջապատված հզոր պարիսպներով, իսկ արևմտյան կողմում կտրուկ իջնում է դեպի Շահվերդ գետի կիրճը: Շրջապարիսպը կառուցված է երկերես պարսպաքարերով մանր խճաքարային միջնալիցքով [նկ. 8]: Ամրապարիսպները հյուսիսարևելյան կողմում հզորացված են զույգ աշտարակներով: Հարավարևմտյան պարսպաշարը հարավային հատվածում հզորացված է 4 աշտարակներով, որտեղ և դեպի ամրոց ընթացող 3 մուտքերից երկուսն են: Բնակատեղին տարածվում է ամրոցի շուրջը՝ բացառությամբ արևմտյան հատվածի [նկ. 4]:

Այս տիպին պատկանող բնակավայրային համակարգերի թվին է պատկանում Բազմաղբյուր 1-ը (նախկին անվանումը՝ ամրոց Փերսի): Այն գտնվում է Բազմաղբյուր գյուղից մոտ 3 կմ հյուսիս՝ Շահվերդ գետի աջ ափին, Կարաղուշ կոնի գագաթին[19]: Ամրոցը (2.5 հա) գտնվում է ծ. մ. 1581 մ բարձրության վրա գտնվող հրվանդանի լանջերին: Միջնաբերդը (0.8 հա) գտնվում է կոնի հարթ կամ հարթեցված գագաթին, որի հարավային, հարավարևելյան և հարավարևմտյան հատվածներում պարսպաքարերը մշակված են: Դեպի ամրոց ընթացող միակ հասանելի ճանապարհը գտնվում է հրվանդանի հյուսիսարևմտյան հատվածում: Բնակավայրը տարածվում է ամրոցից դուրս՝ լանջերին և հարթավայրում: Խիտ դասավորված կացարաններն ունեն կլորավուն, ձվաձև և ուղղանկյուն հատակագծեր [նկ. 5]:

Ամբերդի ավազանի URU(MEŠ)- «քաղաք»[20] տիպի բնակավայրերի թվին է պատկանում Ավան 1-ը (նախկին անվանումը՝ ամրոց Զյանբերդ, Արագածոտն, Ղոյթուր)[21], որը գտնվում է Խնուսիկ գյուղից մոտ 900 մ հարավ-արևելք՝ երկաստիճան հրաբխային կոնի գագաթին: Ծ.մ. 1928 մ բարձրության վրա գտնվող

---

18 Քալանթար 1925, 214, 217–218; Տեր-Հակոբյան 1935, 145; Աբրահամյան 1940, 22; Թորամանյան 1942, 30–31; Արեշյան և այլք 1977, 82–83; Արեշյան, Ղաֆադարյան 1996, 70–71; Арешян 1978, 103; Սիմոնյան, Երանոսյան 1978բ, 37–38; Կիրակոսյան, Աղաջանյան 2013, 73–76:

19 Քալանթար 1925, 214, 218; Աբրահամյան 1940, 24; Տեր-Հակոբյան 1935, 145–147; Արեշյան և այլք 1977, 87–88; Սիմոնյան, Երանոսյան 1978բ, 37–38:

20 Հմմտ. Арешян 1978, 93; Գրեկյան 2018, 225:

21 Աբրահանյան 1940, 23; Արեշյան և այլք 1977, 79, 80; Արեշյան, Ղաֆադարյան 1996, 63–64; Smith, Kafadarian 1996, 27–29.

հրվանդանը կազմված է հարթեցված վերնամասերից: Գագաթի հարթ վերնամասն օղակված է հրվանդանի ռելիեֆը կրկնօրինակող ձվածիրին մոտ (մոտ 0,67 հա) հատակագիծ ունեցող ամրոցով: Ամրոցի գլխավոր և միակ մուտքը գտնվում է հրվանդանի հյուսիսարևելյան կողմում, որը մոտ 5 մ լայնության բացվածք է: Ամրոցից ներս՝ կոնի գագաթին, պահպանվել է մոտ 513 մ^2 տարածք գրավող միջնաբերդը: Դեպի միջնաբերդ ընթացող մուտքը գտնվում է հյուսիսային կողմում և ունի 2 մ բացվածք: Միջնաբերդից ներս, նրա հարավարևմտյան հատվածում պահպանվել է կլոր աշտարակատիպ շինություն: Բնակավայրը տարածվում է ամրոցից դուրս, հարավային ու հարավարևելյան կողմում՝ հրվանդանի լանջերին, ստորոտին և հարթավայրում, որտեղ նկատվում են հիմնականում ուղղանկյունաձև և քիչ քանակությամբ՝ կլոր հատակագիծ ունեցող պատերի հետքեր [նկ. 6]:

Ամրացված սրբատեղի

Այս տիպին պատկանող «կիկլոպյան» կառույցները բավական քիչ թիվ են կազմում: Եղած օրինակներից կարող ենք ենթադրել, որ սրանք կազմված են եղել կրոմլեխից, որը շրջապատված է եղել պարսպով: Այսպիսի կառույցներ հայտնի են Ավան 2-ում: Ծ. մ. 1821,5 մ բարձրության վրա գտնվող հրվանդանը օղակված է տեղանքի ռելիեֆը կրկնօրինակող կլոր (մոտ 0,04 հա) հատակագիծ ունեցող շրջապարսպով: Շրջապարիսպը կառուցված է մեկ երես պարսպաքարերով: Պարսպից ներս՝ կենտրոնական հատվածում, պահպանվել են Օ-ձև կրոմլեխի հետքերը, որի շուրջը գծագրվում են ժայռային ելուստներ և քիչ քանակությամբ քարային կուտակումներ: Միակ մուտքը գտնվում է բլրի հյուսիսարևմտյան կողմում, որը 1,5 մ լայնության բացվածք է [նկ. 7]:

Դղյակ

«Կիկլոպյան» կառույցների այս խումբը Հայկական լեռնաշխարհի սահմաններում, այդ թվում և՝ Արագած լեռան հարավային լանջին, բավական փոքր թիվ է կազմում: Այս տիպին պատկանող կառույց է ուսումնասիրվել Անտառուտ գյուղից 3 կմ հյուսիս: Անտառուտ 1 (նախկին անվանումը՝ ամրոց Ջույգաղբյուր) գտնվում է Ամբերդ տանող ճանապարհի եզրին, Ֆիզիկայի ինստիտուտի դիմաց՝ Արագած լեռան հարավային լանջերին տարածվող ոչ բարձր լեռնային հրվանդանին: Ուղղանկյուն հատակագծով դղյակը կառուցված է որձաքարի ժայռահիմքի վրա (12 × 30 մ, բարձրությունը 2.30 մ): Պարսպաքարերը մշակված են: Հարավային կողմում ժայռափոր հիմքերին գծագրվում են 4–5 սենյականոց տան ավերակներ: Դեպի դղյակ ընթացող հատվածում պահպանվել է ժայռափոր ճանապարհ (բարձրությունը՝ 120 սմ) [նկ. 8]: Այն թվագրվում է մ.թ.ա. 12–9-րդ դարերով[22]:

[22] Արեշյան և այլք 1977, 85:

Եզրակացություն

Արագած լեռան հարավային լանջերին, որոնք նպաստավոր են երկրագործության և անասնապահության համար, առկա են բազմաթիվ մեգալիթյան կառույցներ [հմմտ. նկ. 1]:

Ի մի բերելով առկա տվյալները և դրանք քարտեզագրելով GIS համակարգով՝ պարզ է դառնում, որ մ.թ.ա. 2–1-ին հազարամյակներում Ամբերդ և Շահվերդ գետերի կիրճերի հովիտների հարուստ ջրագրական համակարգը և լեռնային կիրճերով անցնող ճանապարհներն այն կարևոր հանգույցն էին, որի շուրջ խմբավորվում էին «կիկլոպյան» ամրոցները: Դրանք, ըստ երևույթին, գտնվելով ռազմավարական կարևոր գոտում, կապող օղակ էին Արարատյան դաշտը և դրանից հարավ տարածվող շրջանները Ջավախքին և Թռեղքին կապող ճանապարհներին:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Ծ.մ. – Ծովի մակերևույթ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ 1940
Աբրահամյան Վ., Աշտարակի շրջան (ուղեցույց ալբոմ) հնագիտական քարտեզով // Հայկական ԽՍՀ պատմական հուշարձանները 4, Յերևան, Պետհամալսարանի հրատ., 1940:

ԱՐԵՇՅԱՆ, ՂԱՖԱԴԱՐՅԱՆ 1996
Արեշյան Գ., Ղաֆադարյան Կ., Հայկական լեռնաշխարհի ճարտարապետությունը վաղ դասակարգային հասարակության և պետական առաջին կազմավորումների ժամանակաշրջանում // Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, «Գիտություն», 1996, 33–68:

ԱՐԵՇՅԱՆ և այլք 1977
Արեշյան Գ., Ղաֆադարյան Կ., Սիմոնյան Հ., Տիրացյան Գ., Քալանթարյան Ա., Հնագիտական հետազոտություններ Հայկական ՍՍՀ Աշտարակի և Նաիրիի շրջաններում // Լրաբեր հասարակական գիտությունների, 1977, № 4, 77–92:

ԱՐԵՇՅԱՆ, ՍԻՄՈՆՅԱՆ 1976
Արեշյան Գ., Սիմոնյան Հ., ԵՊՀ-ի հայագիտական հետազոտությունների պրոբլեմային լաբորատորիայի 1975 թ. կատարած հնագիտական աշխատանքները // Բանբեր Երևանի համալսարանի, 1976, № 1, 284–288:

ԱՒԵՏԻՍԵԱՆ և այլք 1998
Աւետիսեան Պ., Ենգիբարեան Ն., Սարգսեան Գ., Հայաստանի նորայայտ հնագիտական յուշարձանները (Արտաշաւանի դամբարանադաշտ) // Հանդէս Ամսօրեայ, Վիեննա, 1998, № 1–12, 193–248:

ԱՎԵՏԻՍՅԱՆ 2003
Ավետիսյան Պ., «Սրբազան լանդշաֆտ»-ի նորահայտ փաստագրումներ Հայաստանում (Ագարակի հուշարձանախմբի պեղումների արդյունքները) // Արագածոտն. հոգևոր և մշակույթի ժառանգություն, գիտաժողովի հիմնադրույթներ, Օշական, 2003, 53–55:

ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ 1935
Բարխուդարյան Ս., Խորհրդային Հայաստանի նյութական կուլտուրայի հուշարձանները, Յերևան, Պետական հրատ., 1935:

ԳՐԵԿՅԱՆ 2018
Գրեկյան Ե., Քաղաքաշինությունը և քաղաքաշինական միտքը Բիայնիլի-Ուրարտուում // Պատմա-բանասիրական հանդես, 2018, №, 1225–255:

ԴԱՆԻԵԼՅԱՆ 2019
Դանիելյան Հ., Արագածի հարավային լանջերի բնակավայրային համակարգը, ջրագրությունը և վիշապաքարերի խնդիրը // Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին (խմբ. Ա. Բոբոխյան և այլք), Երևան, ՀԱԻ հրատ., 2019, 625–637:

ԹՕՐԱՄԱՆԵԱՆ 1921–1922
Թօրամանեան Թ., Նախաքրիստոնէական հայ ճարտարապետութիւն // Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի, Վաղարշապատ, Լուսժողկոմատի տպարան, 1921–1922 գիրք Ա և Բ, 207–319:

ԹՈՐԱՄԱՆՅԱՆ 1942
Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 1, Երևան, «Արմֆան», 1942:

ԹՈՒՄԱՆՅԱՆ 2012
Թումանյան Գ., Ագարակ 1 վաղբրոնզեդարյան բնակավայրը (2001–2008 թթ.) // Հնագիտական պեղումները Հայաստանում №25, Երևան, «Գիտություն», 2012:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, ԱՂԱՋԱՆՅԱՆ 2013
Կիրակոսյան Լ., Աղաջանյան Ա., Ղազարավանի և Օրգովի ամրոց-բնակատեղիները (պաշտպանական համակարգի և ճարտարապետության շուրջ) // Հուշարձան տարեգիրք, Ը, Երևան, «Հուշարձան», 2013, 71–82:

ՍԱՐԳՍՅԱՆ 1979
Սարգսյան Հ., Հայաստանի բրոնզեդարյան շինարարական կառույցների մասին // Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 1979, №4, 72–83:

ՍԻՄՈՆՅԱՆ, ԵՐԱՆՈՍՅԱՆ 1977ա
Սիմոնյան Հ., Երանոսյան Հ., Ամբերդի ավազանի պատմական հուշարձանները // Երևանի համալսարան 2, 1977, 68–71:

ՍԻՄՈՆՅԱՆ, ԵՐԱՆՈՍՅԱՆ 1977բ
Սիմոնյան Հ., Երանոսյան Հ., Ամբերդի ավազանի պատմական հուշարձանները // Երևանի համալսարան 3, 1977, 47–57:

ՍԻՄՈՆՅԱՆ, ԵՐԱՆՈՍՅԱՆ 1978ա
Սիմոնյան Հ., Երանոսյան Հ., Քասախի միջին հոսանքի աջափնյա հուշարձանները // Երևանի համալսարան 1, 1978, 42–58:

ՍԻՄՈՆՅԱՆ, ԵՐԱՆՈՍՅԱՆ 1978բ
Սիմոնյան Հ., Երանոսյան Հ., Շաղվերտի ավազանի պատմական հուշարձանները // Երևանի համալսարան 3, 1978, 33–39:

ՍԻՄՈՆՅԱՆ և այլք 1996
Սիմոնյան Հ., Գաշ Հ., Ժամկոչյան Ա., Վարդանյան Ռ., Հմայակյան Ս., Կարապետյան Ի., Ավետիսյան Պ., Հայ-բելգիական համատեղ պեղումները Ոսկեվազում // Հայաստանի Հանրապետությունում 1993–1995 թթ. դաշտային հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված 10-րդ գիտական նստաշրջանի զեկուցումների թեզեր, Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 1996, 68–70:

ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ 1935
Տեր-Հակոբյան Ս., Արմավիրի երկրորդ նորագյուտ արձանագրությունը // Նյութեր Հին Հայաստանի պատմության, ՀԽՍՀ պատմության և կուլտուրայի ինստիտուտի աշխատություններ, հ. I, Յերևան, Պետական հրատ., 1935, 145–147:

ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ 1961
Տեր-Մինասյան Ե., Ամբերդաձորի հնությունները և արձանագրությունները // Էջմիածին, 1961, ԺԸ (Ե), 45–56:

ՔԱԼԱՆԹԱՐ 1925
Քալանթար Ա., Քարե դարը Հայաստանում // Նորք, 1925, №5–6, 207–232:

ՔԱԼԱՆԹԱՐ 1937
Քալանթար Ա., Մի հնագույն ջրաբաշխական սիստեմ Խորհրդային Հայաստանում // Տեղեկագիր, ՀԽՍՀ պատմության և գրականության ինստիտուտ, II գիրք, Յերևան, «Պետհրատ», 1937, 171–194:

АДЖЯН и др. 1932
Аджян А., Гюзальяном Л., Пиотровски Б., Циклопические крепости Закавказья (Отчет о командировке в Армению летом 1930 г.) // Сообщения Государственную академию истории материальной культуры, №½, Ленинград, 1932, 61–64.

РАСУЛОГЛЫ 1993
Расулоглы Т., Циклопические сооружения на территории Азербайджана, Баку, АН СССР. Ин-т археологии. Ленингр. отд-ние, 1993.

АРЕШЯН 1978
Арешян Г., Вопросы типологии населенных пунктов Армении позднего бронзового и раннего железного веков // Государственный музей искусства народов Востока, Научные сообщения, Москва, «Наука», 1978, 91–108.

БАЙБУРТЯН 2011
Байбуртян Е., Последовательность древнейших культур Армении на основании археологического материала, Ереван, Музей истории Армении, 2011.

ДАНИЕЛЯН, ВАСИЛЬЕВА 2018
Даниелян Г., Васильева Е., Укрепленное поселение Гндакар II–I тыс. до н. э // Краткие сообщения Института археологии 253, Москва, Издательство ИА РАН, 2018, 140–147.

ЕСАЯН 1976
Есаян С., Древняя культура племен Северо-Восточной Армении: III-I тыс. до н. э, Ереван, изд. АН Арм. ССР, 1976.

ПИОТРОВСКИЙ 1949
Пиотровский Б., Археология Закавказья с древнейших времён до I тысячелетия до н.э. Курс лекций, Ленинград, изд. ЛГУ, 1949.

САРКИСЯН 1988
Саркисян Г., Разведочные раскопки в Арташаване // Археологические открытия 1986 года, Москва, «Наука», 1988, 473–474.

BADALYAN, AVETISYAN 2007
Badalyan S., Avetisyan P., Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia, Mt. Aragats and its Surrounding Region // British Archaeological Reports, International Series 1967, Oxford, «Archaeopress», 2007.

SANAMYAN 2002
Sanamyan H., Architectural Structure, defensive system and building technique of the fortifications // The North-Eastern frontier Urartians and Non-Urartians in the Sevan Lake Basin: The Southern Shores. Book 7, Rome, CNR, 2002, 325–350.

SMITH, KAFADARIAN 1996
Smith A., Kafadarian K., New Plans of Early Iron Age and Urartian Fortresses in Armenia // A Preliminary Report on the Ancient Landscapes Project, Iran 1996, №34, 23–37.

Henrik A. Danielyan
"Erebuni" Historical-Archaeological Museum-Reserve

THE PHENOMENON OF «CYCLOPEAN» FORTRESSES BY THE EXAMPLE OF THE SOUTH SLOPE OF MOUNT ARAGATS

Keywords: Mount Aragats, «Cyclopean» fortress, Late Bronze Age, Early Iron Age.

Among the important features of the construction of the Bronze and Iron Ages fortresses on the southern slope of Mount Aragats was the group disposition of defensive systems located at a distance of 1–2 km from each other. A large number of fortresses have been found in the studied area. These structures occupied a relatively small area. There are dwellings located on a small territory next to them, and the burial ground is spread around. This group of defensive systems fully comply with the type of É.GAL(MEŠ) - "fortresses" named in Urartian cuneiforms. Fortified settlements consist of a fortress, a citadel, tower-like structures, a settlement, and a burial ground. A citadel is a strongly fortified place of the settlement located on a hill, plateau or promontory, occupying a relatively high position in the area. Its residential complexes are located both inside it and outside, on the slopes and foothills of the hill. In Urartian cuneiform inscriptions this type of settlement is named with the ideogram URU and is characterized by a permanent population. There were the following types of settlements: URU LUGAL-nu-si - "royal city" and URU(MEŠ) - "city". Fortified sanctuaries are few. Analyzing the surviving complexes, we can assume that they consist of a cromlech surrounded by a wall. Another type of "Cyclopean" structures are castles, which are quite few on the southern slope of Mount Aragats. Combining the above data, we can conclude that the southern slope of Mount Aragats was inhabited from the earliest stages of the development of the culture of the Bronze and Iron Ages. Cyclopean fortresses, as the main type of settlements, appear during the transitional period from the Middle to the Late Bronze Age (c. 1500 BC), and most of them refer to the Late Bronze Age (1500–1300 BC) and the Early Iron Age (1200–900 BC).

Генрик Авагович Даниелян
Историко-археологический музей-заповедник «Эребуни»

ФЕНОМЕН «ЦИКЛОПИЧЕСКИХ» КРЕПОСТЕЙ НА ПРИМЕРЕ ЮЖНОГО СКЛОНА ГОРЫ АРАГАЦ

Ключевые слова: гора Арагац, «циклопическая» крепость, поздний бронзовый век, ранний железный век.

Одной из важнейших особенностей строительства крепостей бронзового и железного веков на южном склоне горы Арагац было групповое размещение оборонительных систем на расстоянии 1–2 км друг от друга. На изученной территории выявлено большое количество крепостей. Эти сооружения занимали относительно небольшую территорию. Рядом с ними на небольшой площади располагались жилища, а вокруг простирался могильник. Подобная группа оборонительной системы полностью соответствует типу É.GAL(MEŠ) - «крепостей», упоминаемых в урартских клинописях. Укрепленные поселе-

ния состоят из крепости, цитадели, башнеподобных сооружений, жилых домов и могильника. Цитадель – это хорошо защищенный участок укрепленного поселения, расположенный на холме, плато или мысе, занимающий относительно высокое положение на местности, а жилые комплексы размещаются как внутри нее, так и вне: на склонах и предгорьях холма. Этот тип поселения упоминается в урартских клинописных надписях с идеограммой URU, где его характеристикой было постоянное население. Существовали также поселения типа URU LUGAL-nu-si - «царский город» и URU(MEŠ) - «город». Укрепленные святилища весьма немногочисленны. Анализируя сохранившиеся комплексы, можно предположить, что они состоят из кромлеха, окруженного стеной. Еще одним типом «циклопических» сооружений являются замки, которых на южном склоне горы Арагац довольно мало. Объединив вышеприведенные данные, можно сделать вывод, что южный склон горы Арагац был заселен с самых ранних этапов развития культуры бронзового и железного веков. «Циклопические» крепости, как основной тип поселений, появляются в переходной период от средней к поздней бронзе (ок. 1500 г. до н. э.). Однако, большинство из них относится к эпохе поздней бронзы (1500–1300 гг. до н. э.) и раннему железному веку (1200–900 гг. до н. э.).

Ներկայացվել է՝ 05.05.2022,
գրախոսվել է՝ 15.06.2022,
ընդունվել է տպագրության՝ 01.05.2023:



Նկ. 1. Արագածի հարավային լանջերի տեղագրական հանույթը և «կիկլոպյան» ամրոցների տարածությունը (քարտեզը՝ Հ. Դանիելյանի)



Նկ. 2. Բյուրական 1 ամրոցի տեղագրական հանույթ (հանույթը՝ Հ. Դանիելյանի)



Նկ. 3. Ուջան 1 ամրացված բնակատեղիի տեղագրական հանույթ (հանույթը՝ Հ. Դանիելյանի)



Նկ. 4. Ղազարավան 1 ամրացված բնակատեղիի տեղագրական հանույթ (հանույթը՝ Հ. Դանիելյանի)



Նկ. 5. Բազմաղբյուր 1 ամրացված բնակատեղիի տեղագրական հանույթ (հանույթը՝ Հ. Դանիելյանի)



Նկ. 6. Ավան 1 ամրացված բնակատեղիի տեղագրական հանույթ (հանույթը՝ Հ. Դանիելյանի)



Նկ. 7. Ավան 2 ամրացված սրբատեղի տեղագրական հանույթ (հանույթը՝ Հ. Դանիելյանի)



Նկ. 8. Անտառուտ 1 դղյակի պատաշարը (չափագրությունը՝ Հ. Դանիելյանի)

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Անանյան Հայարփի Գուրգենի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արխիվի և արխիվի մշակման գ/հ խմբի ավագ լաբորանտ
ananyanhg@gmail.com

Անգելուշ Լուսինե Միքայելի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Էթնոսոցիոլոգիայի բաժնի ավագ լաբորանտ
lusineangelush@gmail.com

Գաբրիելյան Արմինե Արարատի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հին հնագիտության բաժնի գիտաշխատող
arminegabriel.iae@gmail.com

Դանիելյան Հենրիկ Ավագի
«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի գիտաշխատող
henrikh.danielyan@gmail.com

Խաչատուրեան Յարութիւն Բիւզանդի
Ճարտարագետ, անկախ հետազոտող, Փարիզ
ha.khatchadourian@free.fr

Հակոբյան Սմբատ Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային մարդաբանության բաժնի գիտաշխատող
smbat.hakobian@gmail.com

Հարությունյան Արսեն Էդուարդի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Վիմագրագիտության բաժնի վարիչ / Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող
ars.vimagraget@gmail.com

Մալոյան Արման Մանուկի
պատմական գիտությունների թեկնածու
«ԿԶՆԱԿ» հիմնադրամի՝ վերապատրաստման ծրագրերի, մշակման և վերապատրաստումների արդյունավետության գնահատման բաժնի պետ
armanmaloyan@mail.ru

Մատիկյան Հասմիկ Համլետի
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտաշխատող / Շիրակի պետական համալսարանի դասախոս
hasvrej@mail.ru

Մարկոսյան Սալվինե Հակոբի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրությունների բաժնի կրտսեր գիտաշխատող
salvi.markosyan@gmail.com

Միրիջանյան Դիաննա Հրաչյայի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Միջնադարյան Հայաստանի հնագիտության բաժնի գիտաշխատող
dianamirijanyan@gmail.com

Մկրտչյան Լևոն Ալբերտի
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի կրտսեր գիտաշխատող / «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահապանության ծառայություն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ
levoncultur@gmail.com

Շամամյան Նարինե Ալբերտի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազագրության ինստիտուտի Ազգագրության բաժնի գիտաշխատող
dancenano@mail.ru

Ռամազյան Սամվել Մարտունի
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի գիտաշխատող
sramaz@mail.com

Սարիբեկյան Մարիամ Գրիգորի
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Վաղ հնագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող / Հայաստանի պատմության թանգարանի ֆոնդապահ
mariamgsaribekyan@gmail.com

Վարդանյան Բենիկ Վարդանի
Հայաստանի պատմության թանգարանի գիտաշխատող
vbenik@yahoo.com

Վարդանյան Նվարդ Խաչատուրի
բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի ավագ գիտաշխատող / Երևանի պետական համալսարանի դոցենտ
nvardv@yahoo.com

Փալանջյան Ռուզան Սուրենի
պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Հին հնագիտության բաժնի կրտսեր գիտաշխատող
ruzanpal@gmail.com

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
5

Սրբագրիչ՝ Անժելա Ամիրխանյան
Ռուսերենի և անգլերենի սրբագրիչ՝ Դիանա Ջարդարյան
Ձևավորում և էջադրում՝ Արտակ Հարությունյան

Տպագրվել է «Հովսեփյան» ՍՊԸ տպարանում
հեռ. 043 107 090
hovsepyanprint@gmail.com

ՀԱԻԱ 5